*ամենևին մէկ տուն և կամ մէկ մարդ չմնաց ի մէջ գիւղիս՝ որ եղև իբրև անապատ սակս մեծամեծ և անտանելի հարկապահանջութեան, այն դառն աղքատն ճն դռուշ խաբած տուաւ, թող գփաչային սալիանն։ Երկրորդ, հուսկ յետոյ եղկելիս ելայ մէկ քահանայիւմ, եկեղեցւոյս զարդն զոր ինչ որ կայր բոլոր սկեստով և պատկերներով. նոյնպէս գրեանքս՝ որ ի հայրութենէ քումէ ընկալեալ էի, և յայլմէ տեղէ, սոքա ամենեքեան ընդ այս քահանայի տարաք վայրաբնակ տեղ մի ի ծերպս վիմի պահեցաք, և թողեալ գնացաք թորթում, բոլոր ձմեռն անդ մնացաք. յերբ մեծ պասին դարձաք և եկաք տեսանել զգրեանս և զայլ բարիս, անձրևն իջել էր, բոլոր գրեանքն և պատկերքն թրջել էին, եղեալ էին որպէս զթուռչի, յոյժ ցաւեցայ, դեռ ևս ցաւիմ մեծամեծ ցաւօք։ Երզրում այնքան բազմացան չարաճճիկ զօրպէներն՝ որ հնարք չկար գիւղէն մարդ մտանէր քաղաքն, իսկոյն կսպաննէին և զինչս նորա կառնէին։ Աստղ արարին՝ ահայ բոլոր տարիմ է, օրն Գ․Ճ հօխայ յրախի հայոց իւիցներուն կառնուն, մեր ուղափառ քահանային մէկն բռնեցին չատ ստակ տուքանք տուին, կրակն յնկել է էրզրում կայրէ. ոչ պէզրկեան մնաց և ոչ տուն, բոլորն յէլան քաղաքէն։ Մեր քերօբէ վարդապետն տարի և Բ ամիս եղև որ կիւմիւշխանայ նստել է՝ վասն ահին, ոչ կարէ գնալ էրզրում, նոյնպէս և տրապիզոն հիմնաչիրջ եղև իսկի անուն մի տալ։... Դարձեալ մեր փաչան եկաւ մեր օլքեան՝ այսինքն բերթ աքրակն. համչէնու մէկ զօրպէմ Ձ թուանքչիով բերից քոմն, և ինծ տարաւ աղնթեր իւր ասաց ժողովուրդ վասն էր թողիր որ քոչեցին. ասացի թէ վասն ծանր խարաճին քոչեցին և լազին. ասաց ահայ այս զօրպէն հովիւ կու դնեմ գրեայ ժողովրդեանտ որ կրկին յետս դառնան՝ ապա թէ ոչ քեզ կու տանջեմ. ասի նոքայ իմ գրով չեն գալ. յետոյ ենք մէկ քանիմ տուն զօրով բերեց. դեռ ևս Գ․ բաժինն դուսն են ըստամպօլ մարդ զրկեց...։*

*Մնամ պատրաստական յամենայնի*

*Ցամի Տեառն* 1761 *յունիսի* 2 — *Նուաստ ծառայ*

[*կարին?*] — *տէր Ցակոբ Տէր Ղազարեան*

# ՄԼԵ.

## Բ

*Գերապարգևի Հօր խնամով Հայր Աբրայիմի, Բանիմաստ Աստուածաբանութեան վարդապետի, Սրբագործ Սուրբ աջոյն ձեռադրութեամբ համբուրեմ...*

*... Այս է մեր խնդիրքն որ գրես Հռոմմայ Սրբազան Սուրբ փափին որ ի վերայ Բ քահանայից, այսինքն Տէր ըստեփանին և Տէր յովսէփին ի կէս մահուան լիակատար ներողութեան տալու հրաման յղէ, քանզի կարի յոյժ հարկաւոր է, ծանիր փոքր յերկիր չէ, սոսկ գիւղն մեր խոտրջուր Գ․Ճ տուն է, թող մօխրկուտ և կարմիրքն, ուր սոքա պաշխայ գիւղօրեայք են. ի միջի սոցա ներողութիւն տալու հրաման միայն անարժանս ունիմ և այլ ոչ ոք. ապայ թէ ես մեռանիմ ինծ ով տացէ ներողութիւն, կամ եթէ անարժանս այլ քաղաք, կամ այլ գիւղ գնացի այս քան բազմութեան ժողովրդեան ով տացէ զներողութիւն...։ ...մեծ որուստու[մ]ն անկաւ ի կարին քաղաքի, քանզի սաստիկ հրաման եկն ի Ստամպօլու թագաւորէն ի վերայ Խպրահիմ փաչային ասելով, եթէ վաղվաղակի զօրպէներուն գլուխն կտրես ու ինծ յղես՝ ապայ թէ այնպէս գիտացիր որ՝ ոչ թէ միայն քոյ գլուխտ կու կտրեմ այլ և ուստերօք և դստերօքն քոյ ջարդեմ զձեզ, բոլոր սօյ և սօբն ձեր վերջացնեմ, սայ ըստ ինքեան ոչ կարաց յառաւել յերկիւղէն գնաց քիւրտիստան քօլօզ անուն կոչեցեալ քիւրթ պէկիմ իւրեան ասզեարօքն բերեց՝ մարտնչեցան ընդ միմեանց. զօրպէներն յաղթեցին փաչային և քօլօզին, քանզի քաղաքին մէկ կողմն բոլոր տիրապ[ե]տեր էին, և դարաճիհանամ օղլուն տունն իւրեանց ամպրոց արարեալ էին. զայն*